

## ՀՀ Նախագահի նախընտրական ծրագիրը

### 4.1 Կրթություն և գիտություն

21-րդ դարում համաշխարհային տնտեսության զարգացման հիմնական հրամայականը ինտելեկտի և գիտելիքների վրա հիմնված հասարակության ձևավորումն է, որտեղ հիմնական շարժիչները գաղափարները և հայտնագործություններն են, և դրանք, մյուսներից արագ, առօրյա կյանք ներդնելու ունակությունը: Ելնելով այս հրամայականից՝ պետության գործառույթները զգալիորեն փոխվում են: *«21-րդ դարում ունենալ կրթության ցածր մակարդակ նշանակում է ունենալ ցածր կենսամակարդակ»:*

Անհրաժեշտ է ընդունել նոր օրենքներ, վերակառուցել գիտության և կրթության համակարգը, ստեղծել այնպիսի կառույցներ, որոնք հնարավորություն կտան համախմբել համայն հայության գիտական և մտավոր ներուժը:

Այս խնդրի լուծումն է հենց, որ դռներ է բացելու ապագա բոլոր զարգացումների համար:

Նման ապագայի կառուցումը կախված է նրանից, թե որքանով մեզ կհաջողվի ստեղծել արդյունավետ, մրցունակ, ժամանակի պահանջներին համապատասխան գիտական և կրթական համակարգ: Իսկ դրա նախադրյալները մենք լիովին ունենք:

Միակ կայուն արժույթը ժամանակակից աշխարհում լինելու է գիտելիքը, հետևաբար հարստանալու հուսալի ճանապարհը լավ կրթություն ստանալն է: